


ՏՆՕՐԵՆ-ԽՍՐԱԳԻՐ
 Ե. ՔՈՐՈՍՆԱՆ
 ՆԱՄԱԿ ԿՈՒ ՈՐ ԵՒ Է ԳՐՈՒԹԻՒՆ
 ՊԵՏՔ Է ՈՒՂՂԵԼ ԱՐ
 Խմբագր. ԱՐՇԱԼՈՍՅ լրագրի
 ԳԱՀԻՔԷ (Հասպագրիք)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 ԵԳԻՊՏՈՒ ՆԱՄԱՐ
 Տարեկան, ողջ դահլիճ. 60
 Վեցամսեայ » 35
 ՕՏԱՐ ԵՐԿՐՆԵՐ
 Տարեկան Ֆրանկ 20
 Վեցամսեայ » 12

Rédaction du journal arménien
ARCHALOUICE
 HABBANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՔԻ ԵՒ ՇԱՐԱՔ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԿԵԷ Է
 ԵՒ ԲՂՔԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ
 Խմբագրութեանս ուղղուած
 գրութիւնք ԵՍ չ'են օրուիք:

**ԱՊՕՐԵՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԸ
 ՎՆԱՍԱԿԱՐ ԱՐԴԻՒՆՔԸ**

Դարձեալ ազգային առաջնորդարանի շրջափակին մէջ տեղի ունեցած անխորժ միջազգայնեան են, որ պատճառ կը դառնան մեր ուշագրութիւնը իրենց վրայ հրաւիրել:

« Արշալոյս » ի ընթերցողաց ծանօթ է արդէն թէ՛ քանի մը շաբաթ առաջ, քահանայ մը իրեններով հոս կը պանդխտէր: Մենք՝ ի լրոյ տեղեկանալով, անոր ի շարս կղերական պաշտօնէից դասուելը, ծանուցինք ի գիտութիւն մերազնէից:

Քահանան՝ որ երևի թէ երկու կողմն ալ ճաշեցաւ նպատակաւ ճամբայ կ'երէր, հերքել ուզեց մեր գրածներն. սակայն իր գործածած բացատրութիւններով, աւելի մեր ըսածները կը հաստատէր. քան թէ կը հերքէր:

Աստուծոյ « բարեհամբոյր » պաշտօնէին այս ընթացքը սակայն, մեր տէրտէրներուն, տիրացուին մէջ կռուոյ խնձորի դերը կը կատարէ ու հոգեհոգեմէջ բանակուի մ'է կը փրթի:

— Դուն պաշտօնապէս եկեղեցւոյ պաշտօնեայ հաստատուած չ'ե՛ս կ'ըսէ, առաջնորդական Փոխ-տեղապահը, որ ասկէ 10—12 տարիներ առաջ, Քրիստոսի պատուէրին համաձայն՝ ձեռքը ցուպ մը և շալակը մախաղ մը՝ Մուշէն կը մեկնի եղբայրները փնտնելու պատրուակաւ և Պոլիս կը հասնի: Անկէ ալ բարեյակող հով մը զինք նեղոսի հիւրընկալ փոքրը կը նետէ . . .

Եղբայրները գտնուած էին . . . Եգիպտոսի ոսկեծին հողին վրայ քահանայութիւնը գէշ զբամազուի մը չէր, երբ լաւ ձեւերով շահագործել ուզէր մէկը:

— Դուն ստախոս ես, կ'ըսէ, միւս պանդուխտ քահանան, որ ասկէ 4—8 տարիներ առաջ, քահանայի մը ընտրութեան համար Առաջնորդին ու թաղականներուն մէջ տեղի ունեցած վէճերուն չնորհիւ՝ Յոնիանու վիճակը իրեն երած էր:

Երկու պանդուխտ և սաքուկ վիճաբանող քահանաներուն կողմը բռնած ըլլալու հաճոյքը պատճառելու համար, անդիէն տիրացուն ալ կը յարէ:

— Տէրտէ՛ր, դուն զիս նախատած ես, ուրիշներուն ականջն ի վար ըսելով թէ՛ ես

իմ պաշտօնիս անարժան մէկն եմ, թէ բան չեմ գիտեր, թէ մահմետականութիւնը ընդունած եմ, և այլն:

Ու վէճը կը սաստկանայ, — քահանայից բնակութեան յատկացուած հոգեհոգեմէջ չորս պատերը թնդալու աստիճան: Իսկ արձագանքը՝ կը տարածուի Գահիրէի չորս կողմերուն վրայ:

Նորեկ քահանան Ռումանական խաչնշանը կուրծքը կախած, աղերսագրով մը փաշաներուն կը դիմէ. Իսկ հինեկները պաշտպանողական դիրքի մէջ, քիչ թէ շատ վստահ, գործին ելքին կ'սպասեն:

Առաջնորդական Փոխ-տեղապահն է միայն որ պէտք եղած տեղերը կը դիմէ, քանի մը կարծիքներ իր կողմը վաստակելու համար՝ և այն ալ արդէն շահուած է . . . մամոնայի չնորհիւ:

Սիմոնականութիւնն ալ պէտք է որ իր դերը խաղայ միշտ:

Քահանայական այս անխորժ վէճերը որ հաշուով մը շատ կանուխ կ'սկսին, Գահիրէի համար առաջինը չեն: Ամէն տեղի Աստուծոյ քարեխաւրդոյ պաշտօնեաներ, երբ Եգիպտական կիսկենքուսն քաղցր ձայնը իրենց ականջին կը հասնի, կ'ելլեն առողջութիւն կամ եղբայրախաղաղութիւն պատրուակելով հոս կը վազեն, բնականաբար մոռնալով « Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց » ու քիչ յետոյ կուր մ'է կ'սկսի:

Այս ամենուն անտարբերութեամբ կը վերաբերուի հայ ժողովուրդը. սրովհետեւ քահանայի անէծքը պէտք չէ՛ առնել. բայց նախ յառաջ թող գտն ա՛յն քահանաները, որոնք անիծելու իրաւունքը ունին արգարե և իրենց սքեմին գէմ մեղանջած չեն ու այն ասան ժողովուրդն ալ թող ըզգուշանայ անիծուելէ:

Թէ մինք ի՛նչ կը մտածենք այս մասին, կ'արժէ որ բացարձակապէս ըսենք և ճշմարտութիւնը չ'քողարկուի:

Քահանաներ, պէտք է գիտնաք թէ՛ դուք ոչ մէկը այստեղ մնալու իրաւունքը ունիք: Դուք եկեղեցիի մը վրայ ձեռնադրուած էք, ձեր ծուխերն ու ժողովուրդը ունիք ձեր երկրին մէջ, որոնք « Արժանի է » ըսած են ձեզ համար: Գնացէ՛ք անոնք հովուներու, եթէ ստուգուի Աստուծոյ խօսքերուն հետեւող պաշտօնեաներ էք, ինչպէս որ սովոր էք ինզինքն/դ անուանել:

Դո՛ւք, քահանաներ, պէտք էր որ

գիտցած ըլլայիք սա ամենատարրական կանոնը թէ՛ այրիացած քահանաները վանքերը կը քաշուին աղօթելու համար. իսկ գալով Եգիպտոսի նման երկրի մը մէջ քահանայագործելու հոգը, դուք ոչ մի բանով Ձեր վրայ մի՛ առնէք, որովհետեւ զուրկ էք շատ մը յարմարութիւններէ, որոնք անհրաժեշտ են Եգիպտոս ապրելու համար:

Այս տեղի հայ ժողովուրդը պէտք ունի արգարե քահանայի, բայց անոնք պէտք է որ ըլլան ընտանիքով և զաւակներով շրջապատուած, պարկեշտ, ամբասիր, տեղական հայ ժողովուրդին ընտրութեամբ քահանայացած և շատ մը լաւագոյն յատկութիւններով օժտուած, կարող, ձեռնհաս, արդի պահանջներուն համարպատասխան. ո՛չ թէ ձեռք նմաններու, որ հովէն տարուբեր աշխատեցներուն պէս՝ ըստ բազդի այս ու այն կողմը նետուելու տրամադիր էք:

Ասիկա լաւ ըմբռնեցէք, քահանաներ, ու եթէ կարելի է, շուտով ձեր տեղերը վերադարձէք առանց ձեզի չ'վերաբերած պաշտօններու համար կռուելով և ձեր սեփական ժողովուրդը հովուեցէք, եթէ ճշմարտ ու անձնուեր հովիւներ էք ու եթէ ձեր նուիրական պաշտօնին գիտակցութիւնը ունիք:

Իսկ դո՛ւք, ժողովականներ, իրաւ է թէ երբ Եգիպտոսի մէջ հայ տարրը սակաւաթիւ էր և մանաւանդ ընծայացուէ զուրկ, կրնայիք մտածել թէ պանդուխտ քահանայ մը տեղական հայ ժողովուրդին հոգեկան մատակարարութիւնը կրնայ լրացնել:

Բայց հիմակ ասոնց ժամանակը անցած է. պէտք է միանգամ ընդմիշտ ընդունիլ թէ՛ տեղական ընտրութեամբ և ձեռնադրութեամբ նուիրագործուած քահանաներու պէտքը զգալի է, որպէսզի պանդուխտները իրենց հիւր մ'ըլլալը ինքն ըստ ինքեան որոշելու և հասկնալու կարող ըլլան ու անօգուտ վէճերու տեղի չ'մնայ. եթէ ոչ, հոս հասնողը անմիջապէս ինքզինքը իրաւամբ քահանայից կարգը դասել պիտի ուզէ և կագն ու կուրը անվերջանալի պիտի ըլլայ եկեղեցւոյ շրջափակին մէջէն:

Սա բացառիկ օգուտներն ալ ընծայած պիտի ըլլաք ազգին, որ նկարագրի տէր կղերներ — ոչ թէ մէկուն միւսին ձեռք խաղալիկներ — ունենալով՝ ո՛չ միայն փցուն վէճեր կարգադրելու զբաղումէն ազատած պիտի լինիք, այլ և ազգային գործերն ալ

իրենց որոշ ուղղութիւնը պիտի ունենան, որչափ ալ սա հակառակ ըլլայ ձեր համոզմանց :

Ուրեմն ո՛րեք միջոցաւ չէք կարող արդարանալ, երբ ապօրէն դրութիւն մը ընդունելով և շարունակելով, փնասակար արդիւնք կ'արտադրէք ազգին ու եկեղեցւոյն համար :

Մենք մեր պարտականութիւնը կատարած կը համարինք այլ եւս :

ՆԵԼՍՈՆ

Ս. ԾՆՈՒՆԴԻՆ ԱՌԹԻԻ

Եղելութիւն մը, որ հանգամանք ունի գայթակղեցնելու բոլոր ճշմարիտ քրիստոնեայնեցիք, այն է թէ՛ ոմանց կողմէն առաջարկուեցաւ այն երկու «քրիստոնեայն» ազգերուն, որոնք Հարաւային Ամերիկայի մէջ վերաբերուին անհնայ, վնասազար ընել Դեկտեմբեր 24ի կէս գիշերէն մինչեւ հետեւեալ կէս գիշեր. Գրիստոսի «Թաղաղութեան իշխանին» ծննդեան տարեդարձը տօնելու համար :

Այսպիսի ձեռնարկ մը թերեւս ծախանարութեան արժանանայ անուամբ միայն քրիստոնեայ եղողներուն. մինչդեռ ճշմարիտ հաւատացեալք անոնք որ քաջամուտ են Աւետարանին բացալայտ եւ մեկնութեան անկարօտ խօսքերուն, մեծ սրտմտութեամբ պիտի տեսնեն թէ կան, անձինք որոնք անկեղծաբար կը կարծեն բարի գալուստ մաղթել «թաղաղութեան իշխանին» երբ միայն քաջապատկառ ժամ արիւնհեղութիւնը դադարի եւ այդ ժամանակամիջոցին մէջ «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն», ի մարդիկ հաճութիւն» խօսքերը յեղելուին :

Այս ըմբռնումով Աւետարանը պէտք է նկատել իբր ձեւակերպութեան պիւրք մը, եւ քրիստոնէութիւնը ոչ այլ ինչ՝ բայց միայն հեթանոսութիւն, այս անուամբ հասկցուած կրօնքէն մի քիչ տարբեր ձեւով :

Եթէ պատերազմիկ երկու լոկացութիւնները ընդունին եղած առաջարկութիւնը, ամբողջ աշխարհի առջեւ պիտի ապացուցանեն որ հակառակ Աւետարանին դարերով քարոզուելուն, մարդիկ նախապաշարմանց կը հետեւին միշտ : Այս պարագայն մեզի կը յիշեցնէ անձ մը՝ որ բարի քրիստոնեայ կ'անուանէր ինքզինք, վասն զի կրթէք չ'էր հայոյէր կիրակի օրերը, բայց ուրիշ օրեր բերնէն ելածը ակա՛ջը չ'էր լսեր :

Բաւականաչափ կործամիտ անձինք կան խոստովանելու համար, որ շարժուն մէկ օրը Աստուծոյ եւ մնացեալ օրերը ստատանային նուիրելէ բարիք մը չ'ծիր : Հակառակ գաղափար մը համարժէք է այն առասպելներուն, որոնց համեմատ մեռելիները երբեմն զուրս կ'ելլեն իրենց գերեզմաններէն եւ պոտոյտ մ'ընելու կ'երթան : Որքան մտելի մ'անկարելի է տարին կամ շարժան անգամ մը դերեզմանէն ողջ առողջ ելլել եւ կրկին հոն վերադառնալ՝ մնացած ժամանակը հոն մնալու համար, այնքան անկարելի է որ մարդ մը տարւոյն կամ շարժու մէջ օր մը Աստուծոյ՝ եւ մնացեալ օրեր ինքն իր անձին եւ ստատանային ծառայէ :

Աստուած մտնելները կրնայ յարուցանել. բայց երբ կը յարուցանէ, մահն այլեւս իշխանութիւն չ'ունենար յարուցելոյն վրայ : Աստուած կարող է ի կեանս վերակոչել իրենց յանցանաց եւ մեղաց մէջ մեռածները. բայց պարբերաբար չ'ըներ այդ վերակոչումը :

Գրիստոս մեր կեանքն է. հետեւաբար անտես ըլլալու չէ անոր ծնունդը. բայց միակ օրուան մը սրբապահութիւնն անբաւական է : Որչափ ապրինք այն կեանքով, պէտք է որ անոր ծննդեան տօնախմբութիւնը կատարուի՝ ո՛չ հարեւանցի արարողութեամբ մը, այլ լրջօրէն եւ իբր իրականութիւն. ո՛չ տարին մէկ անգամ, այլ ամեն օր :

PRÉSENT TRUTH թարգմ. Պ.

ՊԱՊԸ ԿԱՐՏՈՆԷ

ԿԱԹՈՒՆԻԿ ԿՂԵՐԻՆ ԱՄՈՒՍՈՒԹԻՒՆԸ

«Բիւզանդիոն»էն հետեւալը կը քաղենք :

Հայ կղերին մէջէն ամուրիութեան բարձման համար «Բիւզանդիոն»ի զրամները քաջաշող մղե-

ոսնդներն ի՞նչ պիտի ըսեն արգեօք՝ երբ իմացնենք իրենց թէ նոյն իսկ Հռոմայ Պապն այս մասին զիջումներ րնելու պէտքն զգացած է այս օրուան օրս :

Հարաւային Ամերիկայի Եպիսկոպոսներն իրենց վերջին գումարման մէջ՝ հկատեր էին թէ կղերին ամուրի ըլլալու պայմանը շատ փնաս կուտայ կաթոլիկ կղերին : Հիմա խիստ հազուադեպ են ամերիկացի-լատին երիտասարդներ որք անկեղծօրէն ուխտեն ամուրի մնալ : Կա՛մ այն է որ իրենց ուխտին հակառակ կ'գործեն, որով միշտ քար գայթակղութեան կ'ըլլան, եւ որով բողոքական Միսիստարներուն հացին եղ կ'քսեն, կամ ա՛յն է որ կ'խուսափին կղերութենէ, որով լատինական Ամերիկայի մէջ շատ մը կաթոլիկ թեմերու եւ եկեղեցիներու համար հոգեւոր հովիւ գտնել անհնար կ'ըլլայ :

Ուստի, Հարաւային Ամերիկայի Եպիսկոպոսները միաձայն որոշում մը քուէարկելով, խնդրեցին Լէոն ԺԳ. Պապէն որ Հարաւային Ամերիկայի կաթոլիկ կղերին ամուսնացեալ ըլլալուն կամ ամուսնանալուն թոյլտուութիւն ընէ :

Պապն հաւանութիւն տուաւ այս առաջարկութեան եւ կոնդակ մը դրկեց, զոր այս օրերս հրատարակեցին Հարաւային Ամերիկայի բոլոր կաթոլիկ թեմերը : Եւրոպայի կաթոլիկ մամուլը կարելի եղածին չափ քիչ խօսեցաւ այս կոնդակին վրայ : Յայտնի է թէ լատինական ուղեցին անոր վրայ : Խնդրեցին ալ իբրեւ բացառիկ պարագայի մը բացառիկ սնորհմութիւն ներկայացուցին պա՛ռ Լէոն ԺԳ., որ պապերուն երկար շարքին մէջ, շատերէն աւելի հեռատես եւ քաղաքագէտ ըլլալու արդար համբաւը կը վայելէ, ներկայ պարագային մէջ նկատեր է եւ իր կոնդակով բացատրեր է թէ «Եկեղեցականներուն ամուրիութիւնն աստուածադիր կարգ մը, կանոն մը չէ՝ «այլ պարզապէս կանոն մ'է՛ զոր Պապերն եւ Եկեղեցական Ժողովներն հաստատած են, այ՛ն ժամանակներու մէջ երբ հոգեւոր կոչումները (կամ «եկեղեցական ասպարէզը մտնելու յօժարութիւն»-ները) շատ աւելի բազմաթիւ էին, շատ աւելի «եռանդալին, եւ ան ատեն դժուար չէր ամուրի» «ուրեմն անկեղծ ուխտով եկեղեցական կարգի մէջ մտնողները գտնել : Ներկայ պարագային մէջ, զի նկատ առնելով Հարաւային Ամերիկայի Եպիսկոպոսներուն բացատրած վիճակն ու պայմանները, Պապն ազատ կը թողու Հարաւ. Ամերիկայի կղերն ամուսնանալու, եւ ամուսնացած «մարդիկ ալ յեկեղեցականութիւն ընդունելու արգելք չի դնեն անոնց : Բայց արեւիկ լոկ թոյլտուութիւն մ'է : (tolérance) եւ Պապը զարձեւալ «կ'հրակիրէ զիրենք նախամիտք համարելու կատարելութեան (perfection) շաւիղը, եւ ո՛րչափ հնար է ամուրիութիւնը գերադասելու :»

«Թան» հաղորդելով պատկան այս կոնդակին լուրը, կ'աւելցնէ, «Անդրալեւնականք անշուշտ պիտի բողոքեն այնպիսի կանոնէ շեղումի դէմ, զոր իրենք անհպելի, անփոփոխելի օրէնսդրութիւն մը կ'նկատեն : Բայց Եկեղեցիին համար աւելի շահաւէտ է իր պաշտօնականներուն կանոնի ըլլալը, ոչ միայն որպէսզի պաշտօնի նեղութիւն չ'քաշէ այլ մասնաւանդ որպէսզի սեզի չ'մնայ այն խառնազնաց կեանքին, զոր հազուադեպ չէ տեսնել որ կ'վարեն յայտնի համարձակ կաթոլիկ եկեղեցականներ որ հոմանուէի կ'պահեն մասնաւանդ սպանեբորգուկէզ Ամերիկայի ներքին ցանցառ երկիրներուն մէջ :»

Այդ երկիրներ կ'երեւի թէ տաք ըլլալով, (1) հոն ամուրիութեան ուխտն անվթար պահելն աւելի դժուար կ'ըլլայ : Բայց ամուրիութեան վարդապետութիւնն օղի, կլիմայի, աշխարհագրական գօտինքու հետ գործ չունի : Եթէ այդպիսի «վարդապետութիւն» հիմնական, էական է Եկեղեցիին համար, պէտք է ամենուրեք նոյն ըլլայ : Բայց անա՛ նոյն իսկ Հռոմայ եկեղեցին անկարող կ'ըլլայ ամուրիութեան դրութիւնն անխախտ պահելու : Սուրիոյ յոյն-կաթոլիկ կղերին ամուսնացած ըլլալը գիտէք : Գործուի կողմերն ալ յոյն-կաթոլիկ կղերն արեւելեան յոյն կղերին պէս ա-

(1) Եգիպտական կլիման ալ տաքութեան տեսակէտով միւս կողմերէն վար չ'մնար : Խ.

մուսնացած կ'ապրի : Պապն ինքն ալ ֆահա կ'ընէ թէ կղերին ամուրիութիւնն հոգէն զրուած կանոն է, Եկեղեցւոյ հիմնական վարդապետութիւններէն մէկը չէ : Լէոն ԺԳ ի այս խօսքը կ'ուզէինք աղէկ մը տպաւորել մեր «քան զՊապն պապական» ընդգրկմասունքուն ուղեղին մէջ, որպէսզի «ի դէպս եւ յանդէպս» խօսքի չխառնուին, եւ երբ մեր սեւեակներուն մէջ ամուսնացեալ կղերի դրութեան պաշտպանութիւնը տեսնեն, գայթակղիլ չկեղծեն Պապը շատ իրաւունք ունի զգածուելու, տեսնելով որ իր կղերին ամուրի մնալու ուխտը ճշգէշ ազդեցութիւն կ'ընէ իր եկեղեցիին վրայ, եւ Բողոքականութեան ծաւալման դեւրութիւններ կուտայ Ամերիկայի այն կողմերը : Եթէ մենք ալ մեր Եկեղեցիին համար ինչ ինչ բարեփոխումներ ու բարուքուսներ կ'ընենք, ո՛չ թէ անոր էական վարդապետութիւններուն դաշնու կամ տրկարացնելու համար է, այլ զայն առաւել եւս զօրացնելու, առաւել եւս ժողովրդականացնելու փափաքով է անշուշտ :

ԱԶԳԱՅԻՆ

Կ. Պօլսոյ հայ թերթերէն կը տեղեկանանք թէ՛ Գեր. Եղիշէ Նպիսկոպոս Գուրեան, Եգիպտոսի Առաջնորդ ընտրուիլը ծանուցանող հեռագիրը ստանալէ անմիջապէս վերջ, Օրմանեան Պատրիարքին նամակ մը ուղղելով՝ խնդրած է պատշաճ պատասխանը տալ, ի նկատի ունենալով իւր վանական պաշտօնն ու պարտականութիւններն :

Գեր. Գուրեան Եպիսկոպոս անշուշտ իր բանաւոր պատճառներն պէտք է ունենայ չ'ընդունելու համար Եգիպտոսի նման առաջնորդական թեմ մը, որուն ուրիշ շատ մը կղերներ հոգի քարտ աստիճան կը ցանկան :

Արմաշի ֆ. Վանահայրութիւնը, զոր այնքան յաջողութեամբ կը վարէ Գուրեան Եպիսկոպոս ժամանակէ մը ի վեր, պիտի կրնանք ըսել թէ, արդարեւ Եգիպտոսի առաջնորդութենէն աւելի նախընտրելի է ազգին օգտակար ըլլալու տեսակէտով, ուրեմն մենք ալ Եղիշէ Եպիսկոպոսի հրաժարումը անբանաւոր չ'գտնելէ զատ, կը գովենք որ նորին Գերապատուութիւնը միմիայն ազգին օգուսներն ի նկատի ունի եւ ի հարկին գիտէ շատ մը բաներ զո՛հել յօգուտ իւր ազգին :

Տիար Թ. Փատուեան, ինչպէս Լաւրան-Ընթերցատուն ընկերութեան կողմէ ի հրատարակութիւն մեզ զրկուած ազգադարարութիւնը կը հաստատէ, բաւական կազդուութիւն վերջ, վաղիւ Եգիպտական թատրոնին մէջ, որ շատ ճաշակաւոր կերպով կահաւորուած է այժմ, առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացնէ ԱՌԲԱՅՆ ԶԲՈՄՈՒ Վիքթոր Հիւկոյէ իւր մէկ թարգմանութիւնը :

Տիար Փատուեանի համբաւը, ջանքերը, եւ մինչեւ ցարդ գերասանական խումբը վարժեցնելու մասին իւր ցոյց տուած հոգածութիւնը, այժմէն կ'ապահովեն խաղին յաջողութիւնը :

Փատուեանէր հասարակութեան կը մնայ ուրեմն՝ իր ներկայութեամբ քաջալիրել թէ՛ Տիար Փատուեանին եւ թէ՛ անոր խմբին անդամակցող միւս գերասաններն եւ մասնաւանդ Լաւրան-Ընթերցատուն ընկերութիւնն, որ ինչպէս կը յուսանք, ապագային շատ

Որովհետև 1898 տարեշրջանի, այսինքն նախորդ Գործադիր ժողովը, չէր պատրաստած ու ներկայացրած իր հաշիւը, չունենալով իր մէջ գէթ հաշիւ մը կարգադրելու կարող մէկը, այդ Ընդհ. ժողովէն որոշուեցաւ քննիչ մասնախմբի մը յանձնել, հաշիւները աչքէ անցունելու, հաշուեկշիւը պատրաստելու ու տեղեկագրելու գործը: Այդ քննիչ մասնախումբը, թէեւ ուշ, վերջապէս լրացուց իր աշխատութիւնը եւ տեղեկագրեց Ընդհ. ժողովոյ Դիւանին:

Անշուշտ պէտք էր նոյնութեամբ թէ՛ հաշուեկշիւը եւ թէ՛ տեղեկագրերը առանց ո՛րեւէ բառական փոփոխութեան ներկայացնել. ինչպէս Ընդհ. ժողովին, նոյնպէս ալ ժողովուրդին, որ իրաւունք ունի եւ պէտք է գիտնար, եւ թէ ժողովոյդ, որ վերին հսկող մարմինն է, Ընկերութեան ամեն գործառնութեանց, կանոնադրի համաձայն:

Իսկ Դիւանը ի՞նչ ըրաւ ընդհակառակը: Հաշուեկշիւին մէջ թուանշաններուն բացատրութիւնները փոխեց ու տեղեկագրին ալ մէկի փոխելով ուրիշ մը պատրաստեց եւ այգպէս ներկայացուց Զեզ. ժողովուրդէն ալ ծածուկ ու գաղտնի պահելով, որովհետև նա նախկին Գործադիր ժողովոյ ոչ նպաստաւոր եւ ոչ ալ պատուարեր:

Ուրեմն, աւելորդ չենք համարիր, հոս, տեղեկագրին գիտողութիւններէն կտրելորդները ժողովոյդ առաջը դնել, որոնք շատ մօտէն գիտենք:

1. Գործադիր ժողովոյ Ատենադպիր-հաշուակալը, այն ատեն անգործ մէկը ըլլալուն, իր ասորուստի միջոց իր ընկերք աշխատութիւններուն վարձատրութիւն կը պահանջէ, բան մը որ պարտաւոր էր անձնուիրաբար կատարել, քանի որ իր ստանձնած պաշտօնին պարտաւորութիւնն էր եւ ոչ ուրիշ բան: Որով թէ՛ Գործադիր ժողովին որոշուեցաւ եւ թէ՛ Մայր Դիւանին գիտակցութեամբ կը արուի թիշակալին 1159 զրշ., զրամ մը, որ աղքատներուն համար հաւաքուած է միմրայն եւ որ հետեւեալը անոնց իրաւունքէն գողցուած կը սեպուի, ինչպէ՛ս ալ մտածենք, ո՛ր կողմն ալ դարձունենք:

2. Ո՛չ աղքատներուն տրուած նպաստները, ո՛չ հիւանդներուն ընձեռուած խնամքները, ո՛չ պատրաստուած գեղարդիները եւ ոչ մին իրենց ճշգրիտ ու մանրամասն արձանագրութիւնները ունէին:

3. Ի նպաստ Ընկերութեան տրուած ներկայացուածէն 900 զրշ. ապառիկ մնացած այլեւայլ պատուաւոր անձերու վրայ, որով իրապէս 25 1/4 զրշ. պիտի սեպենք ներկայացման զուտ հասոյթը եւ ոչ 925 1/4:

4. Նախկին հաւաքիչն ալ իր կարգին հաւաքած քիչ մը զրամին հարիւրին 10 հաւաքի իրաւուք 49 զրշ.ին տեղ կը արուի 249 զրշ., այդ ալ կասկած չկայ Գործադիր ժողովոյ հաւանութիւնով, որովհետև ապրելու պէտքը ունի եղեր:


Գալով Ընկերութեան ունեցած պատրաստ կրամին, որ նախորդ Գանձապահին քոյն էր, ինչո՞ւ համար մինչեւ հիմայ հոն կը մնան, քանի որ նա ընկերութեան հետ ունէ գործոն յարաբերութիւն չ'ունի այլ եւս — ամեն պատահական կորուստի ենթակայ: Այդ զրամը պէտք էր յանձնուէր Ընկերութեան նոր Գործադիր ժողովին ինչպէս յանձնուեցաւ իր ամեն գոյքերը եւ իրեղէնները:

Ընդհանուր ժողովոյ Դիւանը տեսնելով որ — որովհետև այդպէս պիտի կրնանք ըսել, ուրիշ պատճառ չկայ — տեսնելով որ մենք թէեւ պակաս թուով, իրենց կամայականութեամբ չենք խոնարհիր, եւ մեր անկախ ուղղութիւնը կը պահենք, ուզեց մեզի տկարացնել ու տեսակ մը անգործութեան մատնել եւ ատոր համար էր որ մեր պակաս ընկերները չէին տար մեզի Ընդհ. ժողով գումարելով, հակառակ մեր կրկնակի թախանձանքին: Մինչ այս մինչ այն վրայ հասաւ քննիչ մասնախմբին տեղեկագիրը զոր այդ առթիւ գումարուած Ընդհ. ժողովին կարգադրուեցաւ թէեւ, բայց Դիւանը անիրաւ յամառութիւնով մերթեց ժողովին առաջարկը, որ կը պահանջէր նոյնութեամբ հրատարակութեան տալ զայն, առարկելով թէ «այդ տեղեկագիրը չէ, այլ տեսակ մը ամբաստանագիր»:

(Շարունակելի)

Վ. Ա. ՃԱՍՈՒ ԱՏՈՒՆ ԹԷՅԻ

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ
ՇՍՐԷ-ԱՊՏԻԻԼ-ԱՋԻՉ



Թէյի գործածութեան ընդհանրանալով, ի՞նչի ճաշակն եւ նրբայած է. որով թէյի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է որ միայն երկարատեւ և ճիշտ առևտուրէ յառաջ եկած վորձառութեամբ կ'ստացուի:

Մեր տունն, որ արդէն հանրածանօթ է իր քսանամեայ գոյութեամբ և ընդարձակ գործառնութեամբ, այս տարի եւս իր մասնաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազմապան և մեծաքանակ ընտիր թէյեր ԶԻՆՍՍԱՆԻ, ՃԱՎԱՅԻ, ՍԷՅԼԱՆԻ և ՀՆԴԿԱՍՏԱՆԻ գլխաւոր արտադրիչներէն, որոցմէ արդէն հասած է մեզ. ինչպէս նաև ձրմեռուան եղանակի յարմար թէյեր, որոնք իրենց գերնտիր հոսաւէտութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գնելու ԶԱՓԱՋԱՆՑ աժանութեամբ ալ ամեն քսակի դիւրամատչելի են:

Թէյ կ. Պոլսոյ և գաւառաց, և թէյ օտար երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած վաճառութիւնն կը քաջալերէ մեզ, առաւել ևս յարիւ մեր սկզբունքին, որ է՝

Ուղղամտութիւն Թէյերու ճեպակի, կօխի և զնոց մասին:

Մեծաքանակ թէյ փոքրաքանակ մեզի եղած կ'ընտիրի զրամով յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

9 — 30

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԿԻ 19 ՅՈՒՆՎՍՐ 1900					
Ա.	Թիւ	9661	Հահած է	Պրանք	4000
Բ.	"	9344	"	"	200
Գ.	"	7789	"	"	100
Դ.	"	5124	"	"	30
Ե.	"	2718	"	"	30
Հետեւեալք 25 ական ֆրանք կը շահին					
2732	6989	6304	9744	9361	4447
4931	4374	7011	144	2224	1487
3451	6824	5346	2628	4662	4600
	2634	6399	8320	3398	

ԾԱՆՕԹ. — Այն շահող թիւերը որոյ վիճակեալ պարգեւներն ութը օրէն չեն գանձուիր, Ընկերութեան սնտուկին սեփականութիւնը կը լինին:

Տպագրութիւն Ա. Ա. ԴԱՐԻՆԵԱՆ

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

Վ. Ա. ՃԱՍՈՒ ԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

Յ Օ Ն Օ Կ Ր Ա Յ

Գ. Ա. ՀԻՐԷ, — Մուսի փողոց, — Գ. Ա. ՀԻՐԷ

Ս. Ե. Ս. Սեմաւիի վաճառատան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քօնսօյի ընտիր տեսակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷ՛Ր ՀՈՆ և պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աղամանղազարդ, ոսկի, արծաթ եւ ցիֆի:

Յրանսական եւ ամերիկեան ապրանց ամենաընտիր տեսակներէն զարդեղէններ, օլիեր, մասսիցներ եւ այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԿՈՐ

47—50

ԿԱՐԵՒՈՐ ԱՉԻ

Ամենափափուկ ստամոքս ունեցողներուն համար:

Մի՛ ուտէք երբէք այն հացերէն, որոնք զուրկ են փորձառու և վարպետ հացագործի մը միջոցաւ պատրաստուած ըլլալու առաւելութիւններէն:

Երբ մեր ամեն օրուան կերած հացերը լաւ եփուած տեսակէն չեն, դժուարամարսութիւն կը պատճառեն և հետեւաբար շատ մը հիւանդութեանց ենթակայ կընեն զմեզ:

Այս հիւանդութիւններէն և հետեւաբար բժշկայ յաճախ այցելութիւններէն ազատ մնալու միակ միջոցն է՝ դիմել

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ

ՀԱՅԿԱՉԵԱՆ ՓՈՒՈՐ

Օռօցի Պափ վաճառատան մօտերը, Կամե-էլ-Պեմաքի ճիւղ դիմացը

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և անխարդախ ալիւրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ գաղղիական, անգղիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմիջեղ ըլլալու պայմանաւ:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի պարսիմաթներ և այլն:

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնք ամենայն ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:

22—30

Le Gérant Dr. A. S. HAGOPIAN